ռեմ ի քո անտանելի ճգնութենէդ. կա՛ց ի վերայ ոտից քոց՝ և ելլ ի լեառնդ, ուստի իջերդ, և անդ վախճանեսցիս, և ոչ ոք գիտասցէ զմահ քո առ-ժամայն, և ոչ առնուն զքեզ ի պաշտօն բարուք խրատեալ ի քէն ժողովուրդն քո։*

Այս աւանդութիւններից ահա երևում է, որ Ս. Լուսաւորչի առանձնանալուն և անծանօթ մահով վախճանելուն պատճառ է եղել մի վերին ցուցումն, և այս այն հեռատես և իմաստուն խորհրդով, որ Քրիստոսի նորահաւատ ժողովուրդը չշփոթէ սրբոց մեծարանքը Ս. Աւետարանի ոգւով հաստատուած աստուածային պաշտամունքի հետ։ Այս և աչքի առաջ ունի Մ. Խորենացին, երբ ասում է թէ «աստուածային իմն գոգցես տեսչութեամբ» շատ տարիներ անյայտ մնաց Ս. Լուսաւորչի մարմինը, որպէս զի «մի՛ ի պաշտօն առցի ի դեռահաւատ բարբարոս ազգաց։» Նոյնպիսի վերին ցուցման կամ աստուածային տեսչութեան գործ են առհասարակ Ս. Լուսաւորչի կեանքի այլ նշանաւոր դէպքերն՝ ինչպէս օրինակ խորվիրապից դուրս գալը, նորահաւատ ժողովրդի առաջնորդութիւնն ստանձնելը, Հայոց Մայր Եկեղեցի կանգնելն և այլն։ Հետևաբար զարմանալի չէ, որ նորա անյայտութեան մէջ աշխարհից ծածուկ վախճանուելն էլ բացադրուած է նոյն

* Վարդան, ներբող. Սոփ. Հայկ. Ն.